# «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2015 թվականի հունիսի 22-ի ՀՕ-96-Ն օրենքի 57-րդ հոդվածում՝

- 2-րդ մասում՝

ա. «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով:

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ մասերով՝

«2.1. Սկսած 2020 թվականից գործատուները, սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվական բազայի տեղեկատվության հիման վրա, իրենց հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձանց աշխատանքային գրքույկները ներկայացնում են հետևյալ ժամկետներում.

- 1000 և ավելի աշխատող ունեցող գործատուները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ծանուցվելուց հետո երեք ամսվա ընթացքում,
- 300-ից 1000 աշխատող ունեցող գործատուները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ծանուցվելուց հետո վեցամսվա ընթացքում,
- 100-ից 300 աշխատող ունեցող գործատուները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ծանուցվելուց հետո ինը ամսվա ընթացքում,
- 50-ից 100 աշխատող ունեցող գործատուները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ծանուցվելուց հետո տասներկու ամսվա ընթացքում,

- մինչև 50 աշխատող ունեցող գործատուները` Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ծանուցվելուց հետո տասնհինգ ամսվա ընթացքում։»։

«2.2. Սույն հոդվածի 2.1-ին մասով նշված ժամկետներում աշխատանքային գրքույկները չներկայացրած գործատուների վրա գրքույկները ներկայացնելու պարտականությունը կարող է դրվել դատական կարգով»։

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։